ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

/2012թ.-ի ընթացքում մարդկանց շահագործման՝ <<Թրաֆիքինգի>> դեմ պայքարի ուղղությամբ ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից իրականացված աշխատանքների մասին/

1. ***ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ, 132[2] հոդվածներ՝ <<Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը>> և <<Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը>>***

2012թ.ընթացքում վարույթ է իրականացվել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հատկանիշներով քրեական **21** գործերով, որոնցից **3**-ը՝ նախկինում հարուցված և 2012թ. փոխանցված գործեր են, **3**-ը՝ վերսկսվել են հետախուզվողների հայտնաբերման կապակցությամբ, **1** գործ նախկինում հարուցվել է ՀՀ քր.օր.-ի 178-րդ հոդվածով, այնուհետև վերաորակվել է 132-րդ հոդվածի, գործերից **14-ը** հարուցվել է 2012թ., որից **1-ը** ՀՀ քր.օր.-ի 182-րդ հոդվածով հարուցված, այնուհետև 132-րդ հոդվածի վերաորակված գործ է:

Վերը նշված գործերով բացահայտվել են հանցագործության նոր **19** դեպքեր:

2012թ. ընթացքում վերավորակված և հարուցված **15** գործերից **11**-ը՝ վերաբերել են կանանց պոռնկության շահագործմանը, **1**-ը ՀՀ-ում անչափահասի շահագործմանը՝ մուրացկանության մեջ ներգրավելու միջոցով, **1**-ը՝ մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելուն, **2-ը**՝ աշխատանքային շահագործմանը: Պոռնկության շահագործման **11** գործերից **8**-ը ներքին թրաֆիքինգի կամ շահագործման դեպքեր են, **3**-ի շահագործումը իրականացվել է Թուրքիայում:

2012թ. ընթացքում վարույթ իրականացված **21** քրեական գործերից **9**-ը ուղարկվել են դատարան, **4 -ը** գտնվում են քննության ընթացքում, **4-ը** կասեցվել են, **3** գործի վարույթը կարճվել է, **1** քրեական գործ ուղարկվել է ՌԴ իրավապահ մարմիններին:

Նշված գործերով հայտնաբերվել և տուժող են ճանաչվել նոր՝ **14** զոհեր, որոնցից **10**-ը կանայք: Թվով 14 զոհերից 2-ը՝ հանցագործության կատարման ընթացքում եղել են անչափահաս:

Իրենց համաձայնությունը հետագա աջակցություն ստանալու համար տվել և 2012թ. ընթացքում ՀԿ-ներ են ուղղորդվել **6** զոհեր, ինչպես նաև թրաֆիքինգի ենթարկման վտանգի տակ հայտնված 1 անձ: **1** անչափահաս զոհը գտնվել է <<Երեխաների աջակցության կենտրոն>> հիմնադրամում, իսկ մյուս զոհերը չեն համաձայնել ուղղորդվել ՀԿ-ներ, պատճառաբանելով, որ նպատակահարմար են համարում ռեաբիլիտացվել իրենց ընտանիքներում: Այդ ուղղությամբ նրանց հետ աշխատանքները շարունակվում են:

2012թ. ընթացքում մեղադրանք է առաջադրվել թվով 1**2** անձի: Նշված քր. գործերով **10** անձի վերաբերյալ մեղադրական եղրակացություններն ուղարկվել են դատարան:

2012թ. ընթացում 132, 132[2] հոդ. ***նոր հարուցված*** *քր. գործեր*					
Քր. գործ	Նոր զոհ	Նոր մեղադրյալ	Սկզբնաղբյուր երկիր	Վերջնակետ երկիր	Շահագործման ձևը
14 /3-ը կար-ճված /	13 */կին-9, անչափահաս 2/*	11, *որից կին-6*	ՀՀ	Թուրքիա ՌԴ Շրի Լանկա ՀՀ	Պոռնկություն Աշխատանքային Օրգաններ և հյուսվածքներ վերցնելը Պոռնկություն Մուրացկանություն
2012թ. ընթացքում 132, 132[2] հոդ. ***վերաորակված*** *քր. գործեր*					
1	**1** *որից կին-1*	**1**	**ՀՀ**	**ՀՀ**	**Պոռնկություն**

01.01.2012թ.-ի դրությամբ հետախուզման մեջ են գտնվել **16** անձինք, 2012թ. ընթացքում հայտնաբերվել են **7-**ը, հետախուզում է հայտարարվել **4-**ի նկատմամբ: 01.01.2013թ.-ի դրությամբ ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածի հատկանիշներով հանցագործություն կատարելու համար հետախուզման մեջ են գտնվում թվով **13** անձինք:

2012թ. ՀՀ քր. օր.-ի 132 հոդվածով հետախուզվողներ			
01.01.2012թ.-ի դրությամբ	2012թ.-ի հաշվետու ժամանակահատվածում հայտարարվել է	2012թ.1-ին կիսամյակում հայտնաբերվել է	01.01.2013թ.-ի դրությամբ
16	**4**	**7**	**13**

2. ***ՀՀ քրեական օրենսգրքի 132³ հոդված <<Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը>>***

2012թ.ընթացքում վարույթ է իրականացվել 2012թ. հարուցված շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելու հատկանիշներով **1** քրեական գործով, որը հետագայում վերավորակվել է 178-րդ հոդվածի /բռնաբարություն/:

3. *ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդված՝* ***<<Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը>>***

2012թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի հատկանիշներով վարույթ է իրականացվել նույն տարում հարուցված **2** գործերով, որոնցով մեղադրանք է առաջադրվել 5 անձի և տուժող են ճանաչվել 2 անձ:

*4. ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդված՝ <<****Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը****>>*

2012թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է **3** քրեական գործ, որոնցից 1-ի վարույթը կարճվել է՝ հանցագործության կատարման վաղեմության ժամկետը անցնելու կապակցությամբ:

5. *ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ, 262-րդ հոդվածներ* ***<<Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը>>*** *և* ***<<Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը>>***

2012թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 261-րդ, 262-րդ հոդվածների հատկանիշներով հարուցվել է 35 քրեական գործ: Նշված գործերից մեծ մասը վերաբերում է <<մահճակալներով սննդի օբյեկտների>>, հյուրանոցային համալիների աշխատակիցների կողմից այլ անձանց պոռնկությամբ զբաղվելուն նպաստելուն:

Բացի այդ, 2012թ. ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից իրականացվել են նաև թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

ՀՀ ոստիկանության Ակադեմիայում ոստիկանության ծառայողների տարբեր խմբերի՝ ընդհանուր առմամբ շուրջ 300 ծառայողների համար կազմակերպվել են <<Թրաֆիքինգի>> խնդիրներին վերաբերվող դասընթացներ: Որոշ դասախոսություններ կարդացվել են ԿՀԴՊ ԳՎ թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի ծառայողների կողմից:

Ոստիկանության աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ունեցել տեղական և միջազգային խորհրդաժողովներին, սեմինարներին և հանդիպումներին:

Շարունակվել է համապատասխան նյութերի տեղադրումը police.am կայքէջում առանձին հղումով ստեղծված թրաֆիքինգին վերաբերող հավելվածում:

Հասարակության իրազեկումը բարձրացնելու նպատակով նյութեր են տրամադրվել զանգվածային լրատվական միջոցներին, հարցազրույցներ տրվել մի շարք լրագրողների:

Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել մարդկանց շահագործման զոհերի Ազգային ուղղորդման կարգի վերանայման, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներին:

Իրականացվել են մի շարք աշխատանքներ Հայաստանի Հանրապետությունում 2010-2012 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի և ծրագրի իրականացման ժամանակացույցով նախատեսված դրույթների կատարման ուղղությամբ: Միաժամանակ ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել ՀՀ 2013-2015 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի և ծրագրի իրականացման ժամանակացույցի նախագծերի մշակման աշխատամքներին:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՀԴՊ ԳՎ